

Բանալով «Մուրճի»-ի 1905 թուականի բաժանորդագրու-
թիւնը՝ ամսագիրս մտնում է իր նոր շրջանի հինգերորդ տարին:

Չորս տարուայ գործունէութեան արդիւնքը՝ 48 մեծադիր
հատորները՝ դրուած են մեր ընթերցող հասարակութեան առաջ,
և նրա այն մասը, որ իրան նեղութիւն է տալիս՝ նախ ճանա-
չել մի բան, ուշադրութեան առնել բոլոր հանգամանքները և
ապա միայն կարծիք յայտնել,—անշուշտ պէտք է նկատած լինի
որ մենք աշխատել ենք մեր հանդիսի միջոցով ընթերցողին գի-
տակ դարձնել հայ ժողովրդի և նրա ցիրուցան հատուածնե-
րի նկատմամբ, տեղեակ պահել նրան պետական-հասարակա-
կան կեանքում տեղի ունեցող երեսյթնների՝ մասին և նրա
մտքի առաջ պատուհան բանալ՝ համամարդկային կեանքի,
գրականութեան, գիտութեան և գեղարուեստի էվոլուցիան
դիտելու համար:

Մանրամասնութիւնների մէջ չմտնելով, մենք կարող ենք
ասել մեր ուղղութեան մասին որ մենք աշխատել ենք իւրա-
քանչիւր հարցում փնտրել ճշմարտութիւնը, անկախ որևէ կող-
մընակի միտումներից և շահերից: Անհատների և ազգերի յա-
րաբերութիւնների խնդրում ենք դեկավարուել ենք լիակա-
տար արդարութեան պահանջներով: Նւ անծի, պատուի և
աշխատանքի համահաւասար, խիստ օրինակաւն ապահովու-
թիւնը համարում ենք հասարակական կանոնաւոր զարգացման
վիմաքար:

Մենք աշխատել ենք համախմբել «Մուրճ»-ի շուրջը մեր
գրական ոյժերը, միջոց տալ արտայայտուել իւրաքանչիւրին,
ով նոր միտք և անկեղծ զգացմունք ունի: Ուժագրութիւնս նոյն
ուղղութեամբ շարունակելու է իր գոծնէութիւնը և ապագա-
յում, եթէ միայն հայ հասարակութեան անկուլտուրական և
անհոգ վերաբերմունքը նիւթական անյաղթելի թոււբեր չը-
կանգնեցնեն մեր առջև: Իւրաքանչիւր լուրջ ընթերցող պէտք
է մտածի որ ամենմի բարուրում այս հրատարա՝ թեան թէ
արտաքին և թէ ներքին կողմից կապուած է գլխաւորապէս
բաժանորդագրութիւնից, իսկ մեզանում կրիայի քայլերով է
աճում վճարող ընթերցողների թիւը. 1900-ին (չին Շրջան) էր
245, 1901-ին (Նոր Շրջան) 657, 1902-ին—658, 1903-ին 780,
1904-ին 896: Ուրեմն, չորս տարուց յետոյ նա այժմ հազիւ է հաս-
նում 900-ի, մինչդեռ, պահպանելով որոշ ծաւալը և հոնորարի
սկզբունքը—առանց խմբագրողի աշխատանքի վարձատրութեան
մասին մտածելու անգամ—պէտք էր առնուազն 1000, իսկ
խմբագրողի վարձատրութեամբ հանդերձ 1200 տարեկան բա-
ժանորդ ամսագրիս անդեֆիցիտ հրատարակութեն համար:
Դեկտեմբեր, 1904.